

ՀՏԴ 327

Քաղաքագիտություն

Ռաֆիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման
և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ, ՀՀ
պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային
հետազոտական համալսարանի ավագ գիտնական-վերլուծաբան
E-mail: ravetisyan94@gmail.com

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ
ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳՈՒՄ (ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ-
ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ)

Աշխարհաքաղաքական արդի փոփոխությունների՝ մասնավորապես միաբնեռ աշխարհակարգից դեպի բազմակենտրոն աշխարհակարգի անցման տեկտոնական փոփոխում անհրաժեշտություն է առաջանում նորովի մեկնաբանել ԵՄ-ի ինտեգրային գործընթացների մարտահրավերները: ԵՄ-ի ինտեգրային գործընթացների արտաքին և ներքին մարտահրավերների ուսումնասիրումն արդիական է եվրոպական տարածության անկայունության կանխատեսման և անվտանգության ապահովման համատեքստում: Այդ դիտանկյունից թեմայի ուսումնասիրումը կարող է օգտակար լինել նաև ԵՄ-ի որպես «ուժային կենտրոնի» կենսունակության, նրա գլոբալ դերի նվազման և կոլեկտիվ թուլության բացահայտման համար: Հոդվածում ուսումնասիրվել են ԵՄ-ի ինտեգրային գործընթացների կայունության վրա բացասական ազդեցություն ունեցող մի շարք մարտահրավերներ, մասնավորապես՝ ներեվրոպական միասնականության խնդիրները, ուկրաինական ճգնաժամի ազդեցությունը եվրոպական անվտանգության ճարտարապետության վրա, տնտեսական և էներգետիկ անվտանգության ապահովման մարտահրավերները, ինչպես նաև ԵՄ-ի դեպի արևելք ընդլայնվելու ռիսկերը:

Բանալի բառեր՝ Եվրոպական միություն, ինտեգրացիա, փոփոխվող աշխարհակարգ, ուկրաինական ճգնաժամ, տնտեսական անվտանգություն, էներգետիկ անվտանգություն:

Р.Аветисян

**АКТУАЛЬНЫЕ ВЫЗОВЫ ПРОЦЕССА ЕВРОПЕЙСКОЙ
ИНТЕГРАЦИИ В УСЛОВИЯХ МЕНЯЮЩЕГОСЯ
МИРОВОГО ПОРЯДКА (СТРАТЕГИЧЕСКАЯ ОЦЕНКА)**

Нынешние геополитические изменения, особенно в тектонической фазе перехода от монолитного миропорядка к многоцентровому миропорядку, требуют новой интерпретации вызовов интеграционного процесса ЕС. Изучение внешних и внутренних вызовов интеграционных процессов ЕС актуально в контексте прогнозирования нестабильности и обеспечения безопасности на европейском пространстве. С этой точки зрения изучение темы также может быть полезно для определения жизнеспособности ЕС как «силового центра», его уменьшающейся глобальной роли и коллективной слабости. В статье рассматривались ряд вызовов, негативно влияющих на стабильность интеграционных процессов ЕС, в частности, проблемы внутриевропейской интеграции, влияние украинского кризиса на архитектуру европейской безопасности, вызовы экономической и энергетической безопасности, и риски расширения ЕС на восток.

Ключевые слова: Европейский союз, интеграция, изменение мирового порядка, украинский кризис, экономическая безопасность, энергетическая безопасность.

R.Avetisyan

**CURRENT CHALLENGES OF EUROPEAN INTEGRATION
PROCESSES IN THE CHANGING WORLD ORDER
(STRATEGIC SECURITY ASSESSMENT)**

Current geopolitical changes, notably in the tectonic phase of the transition from a unipolar world order to a multipolar world order, necessitate a new interpretation of the challenges of the EU integration process. The study of the external and internal challenges of the EU integration processes is also relevant in the context of predicting instability and ensuring security in the European area. From this perspective, the study of the topic can also be useful for identifying the viability of the EU as a "global power", its declining global role, and its collective weakness. The article examines a number of challenges that have a negative impact on the stability of the EU integration process, in particular, the problems of intra-European integration, the impact of the Ukrainian crisis on the European security architecture, economic and energy security challenges, and the risks of EU enlargement to the East.

Key words: European Union, integration, changing world order, Ukrainian crisis, economic security, energy security.

Եվրոպական միության (այսուհետև՝ ԵՄ) ձևավորման գաղափարի հիմքում ընկած է ինտեգրացիան՝ որպես տարածաշրջանային խաղաղության գլխավոր երաշխիք: Ինտեգրային գործընթացները Եվրոպայի և նրա աշխարհագրական միջավայրին մոտ գտնվող պետությունների տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական, մշակութային ինտեգրման գործընթացն է, որը հիմնականում իրականացվում է ԵՄ-ի ինտեգրային քաղաքականության միջոցով: Եվրոպական ինտեգրային գործընթացները ներկայացնող բազմաթիվ տեսություններ կան, որոնք բացատրում են ԵՄ-ի ստեղծման պատճառները, միության ընդհանուր ձեռքբերումները, ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների առանձնահատկությունները, բայց մինչև այժմ չկա մեկ միասնական տեսություն, որի շրջանակներում ամբողջությամբ կարող է ներկայացվել ԵՄ-ի ներկայիս իրավասուբյեկտայնությունը:

ԵՄ-ն ունենալով տարածքային կազմակերպման և ինստիտուցիոնալ իրավահարաբերությունների յուրօրինակ համակարգ, հաճախ նմանեցվում է դաշնային կամ համադաշնային կառուցվածքային ձև ունեցող պետությունների: Չնայած այն հանգամանքին, որ ԵՄ-ի ինտեգրային գործընթացներում ազգային և վերազգային ինստիտուտների փոխհարաբերություններում կան և՛ դաշնային, և՛ համադաշնային պետական կառուցվածքային ձևի հետ որոշակի ընդհանրություններ, այնուամենայնիվ, երկուսն էլ չեն արտահայտում ԵՄ-ի ինտեգրային գործընթացների ամբողջ էությունը:

ԵՄ-ի ինտեգրման քաղաքականությունում դաշնապետության դրսևորումներ կարող ենք հանդիպել Եվրոպական միության համաձայնագրի 5-րդ հոդվածով հաստատված սուբսիդիարության և համամասնության սկզբունքի առկայությամբ: Սուբսիդիարության սկզբունքի համաձայն՝ այն ոլորտներում, որոնք չեն պատկանում ԵՄ-ի բացառիկ իրավասությանը, ԵՄ-ն գործում է ըստ սուբսիդիարության սկզբունքի. միջամտում է այն դեպքում, երբ անդամ-պետությունները չեն կարողանում հասնել միության կողմից առաջադրված նպատակներին: Իսկ ըստ համամասնության սկզբունքի՝ ԵՄ-ի գործողությունները պետք է սահմանափակվեն միայն Եվրոպական միության համաձայնագրով սահմանված դրույթներով և չեն կարող ԵՄ-ի սահմանած նպատակներից այն կողմ անցնել¹: Սուբսիդիարության սկզբունքի հիմնական նպատակը Եվրոպական հանձնաժողովի իշխանության ապակենտրոնացումն է և որոշումների կայացման գործընթացին՝ կառավարման համակարգի ստորին մակարդակների մասնակցության խթանումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՄ-ի ինստիտուցիոնալ մարմինները մեծ դերակատարություն ունեն միության որոշումների կայացման գործընթացում, նույնիսկ որոշ ոլորտներում ազգային կառավարությունների

¹ The Treaty on European Union and the Treaty on the Functioning of the European Union, 2016, Article 5, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=OJ:C:2016:202:TOC> (17.01.2021)

գործունեությունը կախված է միության ներսում կայացվող որոշումներից, ԵՄ-ն չի կարող համարվել նաև որպես համադաշնություն: Օրինակ՝ ԵՄ-ի անդամ-պետությունների մեծ մասը, ներգրավված լինելով եվրագոտու միասնական արժույթային համակարգում, ֆինանսական «կախվածություն» ունի ԵՄ-ի ինստիտուտներից, մասնավորապես՝ Եվրոպական կենտրոնական բանկից, որը մշակում է եվրագոտու պետությունների միասնական արժույթային քաղաքականությունը:

ԵՄ-ն ունի վերպետական և միջկառավարական տարրեր, բայց չի կարող ամբողջությամբ համարվել նաև որպես վերպետական կամ միջկառավարական կազմակերպություն, և ունի այդ երկու տարրերին էլ բնորոշ իրավասության որոշակի շրջանակ: ԵՄ-ի անդամ-պետություններից յուրաքանչյուրն ունի ԵՄ-ի ապագայի հետ կապված իր նախընտրությունները: Որոշ պետություններ մշտապես կողմնակից են եղել, որ ԵՄ-ի ինտեգրման վերջնադրությունը լինի Եվրոպայի դաշնային պետության ստեղծումը, մասնավորապես՝ դրա առաջամարտիկը մշտապես եղել է Գերամանիան, իսկ Ֆրանսիայում մշտապես գերակա է եղել «Եվրոպական ինքնիշխանություն» կառուցելու անհրաժեշտությունը: ԵՄ-ի նախկին անդամ Մեծ Բրիտանիան մշտապես դեմ էր արտահայտվում ինտեգրային հարաբերությունների խորացմամբ՝ պետության ինքնիշխանության սահմանափակման մեծացմանը և կողմ էր միջկառավարական համագործակցությանը: Իսկ Իսպանիայի դեպքում, չնայած նրան, որ նա երբեք բացահայտ չի հայտարարել ինտեգրային հարաբերությունների խորացման այս կամ այն նախընտրությունների վերաբերյալ, բայց հաշվի առնելով 2017 թ. Կատալոնիայի անկախության անհամաձայնեցված հանրաքվեի անցկացումը և դրա հետևանքով ստեղծված ներքաղաքական ճգնաժամը, ԵՄ-ի դաշնային կառավարման մեխանիզմի որդեգրումը կարող է ազդել Իսպանիայի «ազգային համայնքների» մասնավորապես Կատալոնիայի ինքնավարության մեծացման վրա:

Եվրոպական միության ստեղծման հիմնական նպատակը փոխադարձ տնտեսական կախվածությունների ստեղծմամբ խաղաղության հաստատումն էր, սակայն միաբնեռ աշխարհակարգից դեպի բազմակենտրոն աշխարհակարգի փոխադրման անցումային փուլում ԵՄ-ն բախվում է լրջագույն անվտանգային մարտահրավերների: Եվրոպական անվտանգային ճարտարապետության վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնների պատճառները և դրանց հնարավոր հետևանքները չենք կարող ամբողջությամբ վերլուծել Եվրոպական ինտեգրման տեսությունների շրջանակներում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Եվրոպական ինտեգրացիան բնորոշող հիմնական տեսությունների (նեոֆունկցիոնալիզմ, լիբերալ միջկառավարականություն, նոր ինստիտուցիոնալիզմ, բազմամակարդակ կառավարում) հիմքում ընկած է տնտեսական փոխգործակցությամբ,

փոխադարձ տնտեսական զսպումներով անվտանգության ապահովման հայեցակարգը:

ԵՄ-ն ունենալով ինտեգրացիայի միջկառավարական մոտեցման տարրեր, պաշտպանական և անվտանգային հարցերով որոշումների կայացման գործընթացում մեծամասամբ կարևորում է անդամ-պետությունների քաղաքական դիրքորոշումը, և վերազգային ինստիտուտները օժտված չեն տվյալ ոլորտում բացառիկ լիազորություններով: ԵՄ-ի անդամ-պետությունները դժվարությամբ են գնում իրենց համար կարևոր նշանակություն ունեցող պաշտպանական ոլորտում բացառիկ լիազորությունների մի մասից հրաժարվելուն և վերազգային ինստիտուտներին այդ լիազորություններով օժտելուն: Այնուամենայնիվ, հաշվի առնելով փոփոխվող աշխարհակարգի արդի մարտահրավերները՝ ԵՄ-ի անդամ-պետությունները գնալով փորձում են պաշտպանական հարցերով ինտեգրման գործընթացն արագացնել: Դա է փաստում այն հանգամանքը, որ 2022 թ. ուկրաինական ճգնաժամից հետո ԵՄ-ի անդամ-պետությունների ղեկավարները հաստատեցին ԵՄ-ի առաջին «Պաշտպանական ռազմավարությունը», որը պաշտոնապես կոչվում է «Ռազմավարական կողմնացույց»¹:

Արդի աշխարհաքաղաքական գործընթացներում ԵՄ-ն բախվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգային մարտահրավերների, որոնք մեծ ազդեցություն կարող են ունենալ ինչպես ԵՄ-ի ներեվրոպական ինտեգրային գործընթացների, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ աշխարհաքաղաքական կայունությանը հաստատմանը միտված՝ երկկողմ և բազմակողմ համագործակցային հարաբերությունների վրա: Չնայած այն հանգամանքին, որ ԵՄ-ի հիմնական մարտահրավերները կապված են ֆինանսատնտեսական անկայունության, եվրագոտու ճգնաժամի, ներգաղթյալների խնդիրների, գործազրկության աճի հետ, այնուամենայնիվ մենք կքննարկենք նաև ԵՄ-ի միասնականության և «կոլեկտիվ հզորության» վրա բացասաբար ազդող ներքաղաքական և աշխարհաքաղաքական այն հիմնական գործոնները, որոնք վերջին տարիներին սկսել են սպառնալ ԵՄ-ի ինտեգրային գործընթացների կայունությանը:

Ներեվրոպական միասնականության վերականգնում: Լինելով ամենամեծ էթնիկ բազմազանություն ունեցող քաղաքական համակարգերից մեկը՝ ԵՄ-ն զգալի դժվարությունների է բախվում անդամ-պետությունների միասնականության պահպանման և կենտրոնախույս միտումների հաղթահարման հարցում: ԵՄ-ի կազմից Մեծ Բրիտանիայի առանձնացումից հետո ստեղծված հասարակական-քաղաքական ճգնաժամը, ահաբեկչական գործողությունները, ազգայնականության ակտիվացումը, ներգաղթյալների

¹ A Strategic Compass for Security and Defence, The Diplomatic Service of the European Union, https://www.eeas.europa.eu/eeas/strategic-compass-security-and-defence-1_en (31.03.2022)

հոսքի աճը, բազմամշակութայնության քաղաքականության ձախողումը, ինչպես նաև կորոնավիրուսային համավարակով պայմանավորված տնտեսական ճգնաժամի խորացումը մեծապես սպառնում են ԵՄ-ի միասնականության պահպանմանը:

ԵՄ-ի ինստիտուցիոնալ համակարգի ներդրմամբ սահմանափակվեց եվրոպական «ազգ-պետությունների» ինքնիշխանությունը, և անդամ-պետությունների համայնքային իշխանություններին տրվող աջակցությունը ԵՄ-ի ինտեգրացիայի շնորհիվ մեծացվեց: Այդ հանգամանքը խթանեց անդամ-պետություններում ինքնավար համայնքի կարգավիճակ ունեցող սուբյեկտների ինքնուրույնությունը և որոշումների կայացման ազգային ու վերազգային մակարդակներում բարձրացրեց համայնքային ինստիտուտների դերակատարությունը: Այս ամենը անդամ-պետությունների տարածաշրջանային ինստիտուցիոնալ մարմիններին տվեց «ինքնավստահություն», և նրանք իրենց տնտեսական զարգացման տեմպերի աճը, քաղաքական ազատության մեծացումը պայմանավորեցին ոչ թե իրենց կառավարության քաղաքականությամբ, այլ ԵՄ-ի ինտեգրացիայով: ԵՄ-ի վերազգային մարմինները որոշակի չափով թուլացրին պետությունների քաղաքական ինստիտուտների դերը, ինչն էլ նպաստեց տարածաշրջանային անջատողականության ակտիվացմանը: Այս համատեքստում կարելի է դիտարկել նաև Մեծ Բրիտանիայի ԵՄ-ի կազմից դուրս գալը, քանի որ ԵՄ-ի ինտեգրացիայի շնորհիվ գնալով մեծանում էր Շոտլանդիայի քաղաքական ինքնուրույնությունը, և ԵՄ-ի կազմից դուրս գալը ուղղված էր նաև Մեծ Բրիտանիայի միասնականության պահպանմանը:

ԵՄ-ի ինտեգրացիայի շնորհիվ Իսպանիայում մեծացավ նաև Կատալոնիայի ինքնավար համայնքի դերը, որն էլ փորձեց կենտրոնական իշխանություններից տնտեսական զիջումներ կորզելու նպատակով շահարկել անջատողականությունը և 2017 թ. անցկացրեց անկախության հանրաքվե: Մեր գնահատմամբ, Կատալոնիայի ինքնավար համայնքի անջատողականության ռազմավարությունն ուղղված է Իսպանիայում Կատալոնիայի հարկաբյուջետային ինքնավարության ընդլայնմանը և ԵՄ-ի որոշումների կայացման գործընթացում Կատալոնիայի ինքնավար համայնքի քաղաքական դերի մեծացմանը: 2017 թ. Կատալոնիայի անկախության անհամաձայնեցված հանրաքվեի անցկացումը և դրան հաջորդած քաղաքական գործընթացները բացահայտեցին նաև ԵՄ-ի նմանատիպ ճգնաժամերի հաղթահարմանն ուղղված ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայության փաստը:

Այնուամենայնիվ կարելի է փաստել, որ ԵՄ-ի ինտեգրացիայի ներքին անվտանգային ամենակարևոր սպառնալիքներից է համարվում ԵՄ-ի անդամ-պետությունների միասնականության պահպանումը, քանի որ առանց այդ հանգամանքի ԵՄ-ն չի կարող ապահովել իր տնտեսական փոխգործակցությունը, որի հիմքով էլ այն ստեղծվել է:

Ուկրաինական ճգնաժամ: Եվրոպական միության ստեղծման հիմնական նպատակը փոխադարձ տնտեսական կախվածությունների ստեղծմամբ խաղաղության հաստատումն էր, սակայն ուկրաինական ռազմական գործողությունները կոտրեցին հետսառըպատերազմյան աշխարհում ձևավորված այդ կարծրատիպը, ինչը էականորեն կարող է ազդել նաև ԵՄ-ի տնտեսական ինտեգրացիայի հետագա ընթացքի վրա: Ավելին, ՌԴ-Ուկրաինա հակասությունների խորացումը փաստեց, որ ոչ բոլոր դեպքերում է, որ տնտեսական փոխկախվածությունը ստեղծում է անվտանգության ապահովման երկարաժամկետ հնարավորություններ:

ԵՄ-ում ռուս-ուկրաինական ռազմական գործողությունները դիտում են եվրոպական անվտանգության երկարաժամկետ ապահովման համատեքստում, և ի տարբերություն 2014 թ. դեպքերի, ԵՄ-ում հակամարտության ներկայիս փուլը դիտվում է որպես համաեվրոպական անվտանգային ճգնաժամ: ԵՄ-ում Արևելյան Եվրոպան սկսել է ընկալվել որպես նախապատերազմյան վիճակում գտնվող տարածաշրջան՝ դեպի Արևմտյան Եվրոպա անկայունության արտահանման ռիսկերով: Դրանով պայմանավորված՝ ԵՄ-ում փորձում են համապատասխան արձագանքման մեխանիզմներ մշակել՝ առաջին հերթին իրենց ազգային պաշտպանական ծախսերը համապատասխանեցնելով ստեղծված անվտանգային իրավիճակին: ԵՄ-ն սկսում է շարժվել դեպի ինքնուրույն անվտանգային համակարգ ունենալուն և բացի տնտեսական ինտեգրումից փորձելու է խորացնել պաշտպանական հարցերով ինտեգրումը, որը կարող է ամբողջությամբ փոխել ԵՄ-ի նկատմամբ ընկալումները:

Ուկրաինական ճգնաժամը բացահայտեց Արևելյան Եվրոպայի և Արևմտյան Եվրոպայի անվտանգային հարցերի վերաբերյալ տարակարծությունները¹: Ըստ հարցումների՝ արևելաեվրոպական և արևմտաեվրոպական հասարակությունները միակարծիք չեն իրենց անվտանգային շահերի պաշտպանության վերապահման հարցերում: Արևմտյան Եվրոպայի պետություններում արմատավորված են ԵՄ-ի ինքնուրույնության մեծացմամբ համաեվրոպական անվտանգային համակարգ ունենալու գաղափարները, իսկ Արևելյան Եվրոպայի պետությունները իրենց անվտանգության ապահովումը մեծամասամբ տեսնում են ոչ թե ԵՄ-ի, այլ ՆԱՏՕ-ի շրջանակներում: Դրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ ուկրաինական ճգնաժամով պայմանավորված՝ Արևելյան Եվրոպայում ավելացվեց ՆԱՏՕ-ի զինծառայողների ներկայացվածությունը²:

¹ Krastev I., Leonard M., *The crisis of European security: What Europeans think about the war in Ukraine*, European Council on Foreign Relations, February 2022, <https://ecfr.eu/publication/the-crisis-of-european-security-what-europeans-think-about-the-war-in-ukraine/> (19.03.2022).

² *Ukraine war: NATO to send more troops to Eastern Europe*, BBC news, <https://www.bbc.com/news/world-europe->

ԵՄ-ի և ԱՄՆ-ի միջև խոր հակասություններ են նկատվում ԵՄ-ի անդամ-պետությունների կողմից ՆԱՏՕ-ի պաշտպանական ծախսերի ավելացման հարցի շուրջ: Եվրոպական պետությունները պարտավորվել են ՆԱՏՕ-ին տրվող ֆինանսական հատկացումների չափն ավելացնել մինչև ՀՆԱ-ի 2%-ը, սակայն մինչև ուկրաինական ճգնաժամը ՆԱՏՕ-ի անդամ ԵՄ-ի պետությունների մի մասը չէր կատարում այդ պարտավորությունը: Եվրոպական հարցումները ցույց են տալիս նաև, որ ԵՄ-ի հասարակությունը թեև իր շահերի պաշտպանությունը որոշ չափով կապում է ՆԱՏՕ-ի հետ, բայց միևնույն ժամանակ բավականին նվազել է ՆԱՏՕ-ի առաջատար պետության՝ ԱՄՆ-ի նկատմամբ վստահության աստիճանը¹: Բացի Լեհաստանից և Ռումինիայից, ԵՄ-ի բոլոր պետություններն իրենց անվտանգության պաշտպանության հարցում առավել շատ վստահում են Գերմանիային և Ֆրանսիային, քան ԱՄՆ-ին:

Տնտեսական անվտանգություն: Վերջին տարիներին ԵՄ-ի տնտեսական կայունության պահպանմանը մեծ վնասներ հասցրեց կորոնավիրուսային համավարակի տարածումը: Կորոնավիրուսային ճգնաժամը ցնցումների ենթարկեց եվրագոտու պետությունների տնտեսությունները և էականորեն մեծացրեց պետությունների կողմից տրամադրվող հանրային առողջապահական ծախսերի չափը: Եվրոպական հանձաժողովի տվյալներով՝ 2021 թ. ԵՄ-ի անդամ-պետությունները կորոնավիրուսային համավարակի հաղթահարման համար ներդրել են ավելի քան 3.7 տրիլիոն դոլար²: Չնայած այն հանգամանքին, որ համավարակի տնտեսական հետևանքները մեծամասամբ հաղթահարված են ԵՄ-ի անդամ-պետությունների կողմից, այնուամենայնիվ այժմ էլ այն ԵՄ-ի տնտեսության լրջագույն խնդիրներից է համարվում:

Որոշ կանխատեսումներով՝ ԵՄ-ի անդամ-պետությունների մեծ մասը 2021 թ. երրորդ եռամսյակում արդեն հասել է տնտեսության ՀՆԱ-ի նախահամավարակային վիճակին, իսկ արդեն 2022 թ. վերջին բոլոր պետությունները կկարողանան ամբողջությամբ վերականգնել իրենց տնտեսությունները³: Տվյալ վերլուծության իրականացման ժամանակ դեռևս չէին սրվել *Արևմուտք-ՌԴ* հարաբերությունները, և կանխատեսման մեջ հաշվի չեն առել, թե *Արևելք-Արևմուտք* ռազմավարական տնտեսական հաղորդակցային կապերի խոչընդոտները ինչպես կարող են ազդել եվրոպական տարածության տնտեսական անվտանգության ապահովման վրա:

Ուկրաինական ճգնաժամը, ինչպես եվրոպացի տնտեսագետներն են անվանում, համարվում է վերջին տարիների ԵՄ-ի երրորդ տնտեսական

[60853052#:~:text=Nato%20is%20set%20to%20approve,%2C%20Slovakia%2C%20Bulgaria%20and%20Romania \(01.04.22\).](#)

¹ *Stě u Krastev I., Leonard M., նշվ. աշխ.*:

² European Commission, Jobs and economy during the coronavirus pandemic, https://ec.europa.eu/info/live-work-travel-eu/coronavirus-response/jobs-and-economy-during-coronavirus-pandemic_en (01.04.22).

³ *Տե՛ս նույն տեղում:*

ասիմետրիկ ցնցումը՝ հաջորդելով 2008 թ. եվրագոտու ճգնաժամին և 2019 թ. սկսած կորոնավիրուսային ճգնաժամին¹։ Եվրոպական կենտրոնական բանկի նախնական վերլուծության համաձայն՝ ուկրաինական ճգնաժամը և ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների սահմանումը կարող է եվրագոտու ՀՆԱ-ն նվազեցնել 0,4 %-ով։ Ճգնաժամի երկար ընթացքի և պատժամիջոցների նոր փաթեթների ընդունման դեպքում ռիսկեր կան, որ եվրագոտու ՀՆԱ-ն կարող է նվազել մինչև 1 %։ Ըստ վերլուծությունների՝ ճգնաժամի շուտափույթ հաղթահարման և պատժամիջոցների մեղմացման դեպքում այս տարի կհաջողվի եվրագոտու 19 պետություններին խուսափել արժութային ճգնաժամից։ Այնուամենայնիվ, ԵԿԲ-ի փորձագետները դժվարանում են միանշանակորեն գնահատել ԵՄ-ի տնտեսական վնասի վերջնական չափը։ ԵՄ-ի տնտեսությունն առանց այն էլ գտնվում էր ոչ կայուն վիճակում, 2021 թ. գնաճը հասել է 5,1 %-ի, և նախնական կանխատեսումներ կան, որ ուկրաինական ճգնաժամի ներկայիս փուլը ևս նույնքան կարող են ավելացնել գնաճը²։ Օրինակ՝ եվրագոտու երկրորդ ամենամեծ տնտեսություն ունեցող Ֆրանսիայում ճգնաժամի պատճառով սպառողական գների ինդեքսը 4,1 %-ով արդեն կանխատեսվածից բարձր է։

Էներգետիկ անվտանգություն։ Ուկրաինական ճգնաժամը երկարաժամկետ կտրվածքով մեծ վնասներ է հասցնելու նաև ԵՄ-ի անդամ-պետությունների էներգետիկ համակարգին։ ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը ԵՄ-ի կողմից դրսևորվում է որպես ինքնապաշտպանական քաղաքականություն և առավել շատ ունի զգայական բնույթ։ Դա է փաստում նաև այն հանգամանքը, որ առանց լուրջ այլընտրանքներ ունենալու ԵՄ-ից բարձրաձայնում են ռուսական գազից ամբողջությամբ հրաժարվելու պատրաստականության մասին, բայց եվրոպական պետությունների մի մասը, հաշվի առնելով այլընտրանքների բացակայությունը, ուղղակի հրաժարվում է գնալ այդ քայլին։ ԵՄ-ի 27 անդամ-պետությունները միասին ռուսական գազից ունեն մոտ 40 % կախվածություն։ Նույնիսկ Միջերկրական ծովում հայտնաբերված իսրայելական գազի փոխադրման ուղիները կառուցելուց հետո ԵՄ-ն չի կարողանա դիվերսիֆիկացնել ռուսական գազի ծավալները։ Նախնական գնահատումներով՝ Իսրայելը կարող է ապահովել տարեկան մոտ 10 մլրդ խորանարդ մետր գազ³, գրեթե նույնքան որքան Ադրբեյջանն է ներկայումս ապահովում եվրոպական պետություններին։ Համեմատության

¹ The war in Ukraine and its implications for the EU, The Diplomatic Service of the European Union, https://www.eeas.europa.eu/eeas/war-ukraine-and-its-implications-eu_e (04.04.2022).

² European Central Bank, Macroeconomic projections, <https://www.ecb.europa.eu/pub/projections/html/ecb.projection.s202203.ecbstaff-44f998dfd7.en.html> (04.04.2022).

³ Marks J., Can Israel solve Europe's gas problem? We asked the experts, April 10 2022, <https://www.israel21c.org/can-israel-export-gas-to-europe-we-asked-the-experts/> (04.04.2022).

համար նշենք, որ ՌԴ-ն 2021 թ. դեպի ԵՄ արտահանել է 155 մլրդ խորանարդ մետր: Եվրոպայում ռուսական բնական գազի արտահանումները չեն կարող դիվերսիֆիկացվել նույնիսկ հեղուկ գազի մատակարարումների մեծացման հաշվին, քանի որ լոգիստիկայի առումով ԵՄ-ն դեռևս պատրաստ չէ նման քանակի հեղուկ գազ ընդունել, իսկ ԱՄՆ-ն ու Քաթարն էլ պատրաստ չեն նման ծավալով հեղուկ գազ մատակարարելուն:

ԵՄ-ի դեպի արևելք ընդլայնվելու մարտահրավերները: Ուկրաինական ճգնաժամը լուրջ մարտահրավերներ ստեղծեց եվրոպական անվտանգային ճարտարապետության համար: ԵՄ-ում ակտիվ քննարկման առարկա դարձավ ՌԴ-ին հակադդելու և Ուկրաինային հավատարմության խոստումներ և անվտանգային երաշխիքներ տալու օրակարգային հարցերը: Ուկրաինայի՝ ԵՄ-ի անդամակցության հարցը առավել շատ իրավական, քան քաղաքական գործընթաց է իրենից ենթադրում, որը բավականին բարդ ճանապարհով պետք է անցնի և կարող է տևել տասնամյակներ: Նույնիսկ Ուկրաինայի անդամակցության նկատմամբ անդամ-պետությունների միաձայնության առկայության դեպքում, թեկնածու պետությունից պահանջվում է խիստ բարեփոխումների իրականացում, պետության իրավական համակարգի համապատասխանեցում ԵՄ-ի իրավական համակարգին: Չնայած այն հանգամանքին, որ թեկնածու պետության հետ բանակցությունները վարում է ԵՄ-ի հանձնաժողովը, այնուամենայնիվ բարեփոխումների բոլոր փուլերը պետք է իրականացվեն բոլոր անդամ-պետությունների համաձայնության ստացման պարագայում: Այսինքն՝ ԵՄ-ին անդամակցելու գործընթացն ամբողջությամբ հիմնվում է անդամ-պետությունների քաղաքական միաձայնության վրա:

1993 թ. Կոպենհագենյան պահանջների հիմնական նպատակը անդամակցող պետությունների՝ ԵՄ-ի տնտեսական մրցակցային շուկային համապատասխանեցման հարցն է, որպեսզի անդամակցող պետությունը ԵՄ-ի համար դառնա ոչ թե տնտեսական օգնության օբյեկտ, այլ դա սիներգետիկ արդյունք ունենա եվրոպական տնտեսության համար: Ուկրաինայի անդամակցության հարցը ոչ թե իրադարձություն է, այլ իրավական, քաղաքական, տնտեսական բարեփոխումների բարդ գործընթաց, որը կարող է տևել տասնամյակներ: Հաճախ քննարկվում է Ուկրաինայի՝ «արագ ընթացակարգով» անդամակցության հարցը, բայց ԵՄ-ի գործող իրավական համակարգում չկա նման մոտեցում:

Ուկրաինային ԵՄ-ի պաշտոնական թեկնածուի կարգավիճակ տալը կարող է դիտվել որպես ճգնաժամային իրավիճակում գտնվող եվրոպական երկրին նվիրվածության և աջակցության մարդասիրական քայլ, բայց դա սահմանափակվելու է միայն քաղաքական սիմվոլիզմով: Բայց եթե Ուկրաինայի անդամակցումը տեղի ունենա ԵՄ-ի իրավական համակարգին խորթ «արագ ընթացակարգով», ապա անպայման պետք է վերանայման ենթարկվեն

Կոպենհագենյան չափանիշները և նվազեցվեն անդամակցության պահանջները, որին ԵՄ-ի տնտեսությունը պատրաստ չէ: Բացի դա, նման պարագայում մեծ դժգոհությունների ալիք կարող է բարձրանալ անդամակցության համար պայքարող բալկանյան պետություններում, ինչը նոր սպառնալիքներ կստեղծի Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի քաղաքական և տնտեսական կայունության համար:

ԵՄ-ի համար Ուկրաինային անդամակցության պաշտոնական թեկնածուի կարգավիճակ տալը ճգնաժամի հաղթահարման միջոց չի կարող համարվել, իսկ անդամակցության պայմանների փոփոխումը սպառնալու է ոչ միայն ԵՄ-ի տնտեսական համակարգին, այլ նաև նրա գոյությանն ընդհանրապես: Դա կարող է սպառնալ նաև ԵՄ-ի ինստիտուտներում արևմտյան և արևելյան եվրոպական պետությունների ուժային բալանսի փոփոխմանը:

Ուկրաինայի անդամակցությանը խոչընդոտում է նրա բնակչության չափով պայմանավորված որոշումների կայացման գործընթացների վրա ազդեցությունը և աղքատության աստիճանը: Մյուս խոչընդոտը կարող է լինել ԵՄ-ի պայմանագրի 42-րդ հոդվածը, որը պարտավորեցնում է անդամ-պետություններին բոլոր միջոցներով օգնություն տրամադրել, եթե որևէ այլ անդամի վրա ագրեսիայի սպառնալիք կա¹: Հոդվածով չի հստակեցվում, թե որն է ագրեսիան և ինչ միջոցներով պետք է պայքարել դրա դեմ:

Ամփոփելով՝ նշենք, որ ԵՄ-ի ինտագրացիան, հիմնված լինելով եվրոպական պետությունների տնտեսական փոխգործակցության վրա, կարողացել է Եվրոպայում խաղաղության երկարաժամկետ երաշխիքներ ապահովել: Փոփոխվող աշխարհակարգում ԵՄ-ն բախվում է նոր անվտանգային մարտահրավերների, և անհրաժեշտություն է առաջանում վերանայել ինտեգրացիոն քաղաքականության առաջնահերթությունները և բացի տնտեսական փոխգործակցությունից, խորացնել նաև պաշտպանական հարցերով ինտեգրումը: Հաշվի առնելով վերջին միտումները՝ ԵՄ-ն գնալու է դեպի «պաշտպանական միություն» դառնալուն և արդեն հնարավորություն է ստանալու մեծացնել ռազմական ծախսերը ոչ միայն պաշտպանողական, այլև հարձակվողական զինատեսակների ձեռքբերմամբ և երրորդ պետություններին վաճառքի համար:

Գրականություն

1. A Strategic Compass for Security and Defence, The Diplomatic Service of the European Union, https://www.eeas.europa.eu/eeas/strategic-compass-security-and-defence-1_en (31.03.2022)

¹Consolidated versions of the treaty on European Union and the treaty on the Functioning of the European Union, Article 42, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:12016ME/TXT&from=EN> (05.04.2022).

2. Consolidated versions of the treaty on European Union and the treaty on the Functioning of the European Union, Article 42, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:12016ME/TXT&from=EN> (05.04.2022).
3. European Central Bank, Macroeconomic projections, https://www.ecb.europa.eu/pub/projections/html/ecb.projection.s202203_ecbstaff-44f998dfd7.en.html (04.04.2022).
4. European Commission, Jobs and economy during the coronavirus pandemic, https://ec.europa.eu/info/live-work-travel-eu/coronavirus-response/jobs-and-economy-during-coronavirus-pandemic_en (01.04.22).
5. Krastev I., Leonard M., The crisis of European security: What Europeans think about the war in Ukraine, European Council on Foreign Relations, February 2022, <https://ecfr.eu/publication/the-crisis-of-european-security-what-europeans-think-about-the-war-in-ukraine/> (19.03.2022).
6. Marks J., Can Israel solve Europe's gas problem? We asked the experts, April 10 2022, <https://www.israel21c.org/can-israel-export-gas-to-europe-we-asked-the-experts/> (04.04.2022).
7. The Treaty on European Union and the Treaty on the Functioning of the European Union, 2016, Article 5, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=OJ:C:2016:202:TOC> (17.01.2021)
8. The war in Ukraine and its implications for the EU, The Diplomatic Service of the European Union, https://www.eeas.europa.eu/eeas/war-ukraine-and-its-implications-eu_e (04.04.2022).
9. Ukraine war: NATO to send more troops to Eastern Europe, BBC news, <https://www.bbc.com/news/world-europe-60853052#:~:text=Nato%20is%20set%20to%20approve,%2C%20Slovakia%2C%20Bulgaria%20and%20Romania> (01.04.22).

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ք.գ.դ. Ա.Փ.Ենգոյանը: